

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)**

**1. Իրավական դաշտ**

**Ընկերության գործունեությունը**

«ԻՆԳՈ Արմենիա» ԱՓԲԸ-ն (այսուհետ ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն 1997 թ-ին: Ընկերությունը տրամադրում է ապահովագրական ոլորտի ծառայությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում տեղակայված գրասենյակում՝ Տպագրիչների 8 հասցեում:

**Բաժնետերեր**

Ընկերության բաժնետոմսերի 75 %-ը պատկանում է «Ինվեստ-Պոլիս» ՍՊԸ-ին (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Լեսնայա փողոց, 41 շենք), և 25 %-ը Լևոն Ալթունյանին (Հայաստանի Հանրապետություն, Երևան, Տեր-Գաբրիելյան 53/12):

**Կորպորատիվ կառավարում**

Ընկերության կորպորատիվ կառավարման գործընթացը ներկայումս գտնվում է վերափոխման փուլում և անցում է կատարվում կառավարման երկաստիճան համակարգից (բաժնետերերի ժողով- գործադիր մարմին) եռաստիճան համակարգի (բաժնետերերի ժողով-խորհուրդ-գործադիր մարմին): Այն կավարտվի Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկում ընկերության նոր կանոնադրության գրանցմամբ և դրան համապատասխան նոր կառավարման մարմինների լիցենզավորմամբ և գրանցմամբ:

**2. Հաշվապահական հաշվառման ստանդարտներ**

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում է ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականության միջոցով , որն իրենից ներկայացնում է հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ու ներկայացնելու կոնկրետ սկզբունքներն ու հիմունքները, կանոնները, ձևերը, կարգերը, ընթացակարգերը: Ընկերության կողմից ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթները հիմնված են հաշվապահական հաշվառումը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՍ) պահանջների վրա:

**Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների, ինչպես նաև շենք-շինությունների, որոնք պարբերաբար վերագնահատվում են:

Տնտեսական գործառնությունները ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են հաշվեգրման սկզբունքի հիման վրա: Բացառություն կազմում է միայն դրամական միջոցների շարժի վերաբերյալ հաշվետվությունը, որը պատրաստվել է «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՀՀՍ7-ի պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված մեծությունների ներկայացման արժույթ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ դրամը: Գումարները հաշվետվություններում ներկայացված են հազար դրամներով: Արտարժույթով իրականացված գործարքները գրանցվում են համարժեք դրամներով՝ փոխարկման հիմք ընդունելով համապատասխան արժույթի համար Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված ակտիվներն ու պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատվել են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքները:

Ֆինանսական հաշվետվություններում ակտիվների և պարտավորությունները հաշվանցումը կիրառվել են հետևյալ դեպքերում՝

Ակտիվների օտարումից ստացված հասույթից հանվում են ակտիվի հաշվեկշռային արժեքը և օտարման հետ կապված ծախսերը և արդյունքը ցույց է տրվում որպես զուտ շահույթ կամ վնաս (հիմնական միջոցների օտարում, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարում):

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի բերման հետ կապված վերահաշվարկման հետ կապված եկամուտներն ու ծախսերը իրարից հանվում են և արդյունքն արտացոլվում է որպես շահույթ կամ վնաս:

Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացած եկամուտներն ու ծախսերը ցույց են տրվում զուտ հիմունքով:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ընկերությունը պահպանել է հետևողականության, անընդհատության, էականության և համադրելի տեղեկատվության սկզբունքները:

### **Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը**

Ընկերությունում եկամուտները և ծախսերը հաշվառվել և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են «Հատույթ» ՀՀՀՀՍ 18-ի պահանջների հիման վրա: Եկամուտները և ծախսերը հաշվառվել են հաշվեգրման սկզբունքով: Ընդ որում պահպանվել է եկամուտների և ծախսերի ճանաչման համապատասխանությունը: Մասնավորապես, ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց հասույթի և այդ ծառայությունների մատուցման համար իրականացված ծախսումների հաշվեգրումը կատարվել են միաժամանակ այն ժամանակաշրջանի ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

Ընկերությունում հիմնական գործունեությունից ստացված եկամտի հիմնավորող փաստաթուղթ է համարվում ՝ թողարկված ապահովագրական վկայագիրը: Ընդ որում, վկայագրերի թողարկման և եկամուտների ճանաչման ամսաթիվ է համարվում հետևյալ երկու ամսաթվերի՝ վկայագրերի թողարկման (վավերացման) և վկայագրերի գործողության սկզբի ամսաթվերից առավելագույնը:

Ապահովագրական վկայագրերի հետագա փոփոխությունները իրականացվում են ապահովագրական վկայագրերի անբաժանելի մաս կազմող հավելվածների թողարկմամբ, որոնց գծով առաջացող եկամուտները կամ ծախսերը նույնպես ճանաչվում են հավելվածների թողարկման և նրանց գործողության մեջ մտնելու ամսաթվերից առավելագույնով:

Վերապահովագրության գծով ծախսերը ընկերության կողմից հաշվեգրվում են ապահովագրական վկայագրերի թողարկման հետ զուգահեռ:

### **Արտարժույթային փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը**

Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ՀՀ դրամով տվյալ արտարժույթի նկատմամբ կիրառելով ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված գործարքի օրվա հաշվարկային փոխարժեքը:

Հաշվապահական հաշվետվությունների պատրաստման ամսաթվին արտարժույթով արտահայտված ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ ԿԲ-ի կողմից տվյալ ամսաթվի համար սահմանված փոխարժեքներով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ, երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են եկամուտ կամ ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում այն հաշվետու ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթային փոխարժեքային տարբերությունները ընկերության կողմից հաշվառվել և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները ՀՀՀՀՍ21»-ի դրույթների հիման վրա:

### **Հարկեր (ընթացիկ և հետաձգված)**

Ընկերության կողմից շահութահարկի հաշվառումը և ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը կատարվում է «Շահութահարկ» ՀՀՀՀՍ12-ի դրույթների հիման վրա:

Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես ծախս: Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույքաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա շահութահարկի գծով կատարված ճշգրտումները:

**Ֆինանսական գործիքների ճանաչումը և չափումը**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական գործիքների, մասնավորապես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի հիման վրա: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ձեռք բերման պահին ճանաչվում են իրենց սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված փոխհատուցման իրական արժեքը՝ ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները: Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակներով պահով ֆինանսական ակտիվների իրական արժեքների փոփոխություններից առաջացած եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես շահույթ կամ վնաս:

Ընկերությունը ֆինանսական ակտիվները ապաճանաչում է, երբ կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ակտիվը: Վերջինս տեղի է ունենում, երբ պայամանագրում սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները իրացվում են, իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է կամ ընկերությունը հրաժարվում է այդ իրավունքից:

Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները վաճառքի ժամանակ ապաճանաչվում են և նրանց դիմաց ստացվելիք համապատասխան գումարները ճանաչվում են այն օրվա դրությամբ, երբ ընկերությունը պարտավորվել է վաճառել այդ ակտիվները:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքները ապաճանաչվում են այն օրը, երբ փոխանցվում են ընկերության կողմից:

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրաց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները ՀՀ ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցները:

**Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ**

Ընկերությունում հիմնական միջոցները ներկայացված են նրանց սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության ու արժեզրկումից կորուստների տարբերությամբ:

Հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվում է նրանց օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կիրառելով գծային մեթոդը: Մաշվածության հաշվարկումը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման պահին հաջորդող ամսից: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը կապիտալացվում են և ամորտիզացվում նրանց օգտակար ծառայության և վարձակալության ժամկետներից նվազագույնի ընթացքում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության սահմանված ժամկետներն են՝

Շենք-շինությունների համար	20 տարի
Համակարգչային սարքավորումների համար	1 տարի
Տնտեսական գույքի համար	5 տարի
Տրանսպորտային միջոցների համար	5 տարի
Այլ հիմնական միջոցների համար	5 տարի

Մինչև 50 000 դրամ դրամ արժողությամբ հիմնական միջոցների համար սահմանված է 1 տարի նվազագույն ժամկետ:

Հիմնական միջոցների ծառայության ընթացքում հետագայում նրանց վրա կատարված ծախսումները ավելացվում են տվյալ միավորի հաշվեկշռային արժեքին, երբ դրանց շնորհիվ ակնկալվում է ավելի շատ ապագա տնտեսական օգուտների ներհույս դեպի կազմակերպություն, քան ակտիվի սկզբնական գնահատումից: Հակառակ դեպքերում բոլոր հետագա ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախս:

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները արտացոլված են ձեռք բերման արժեքով հանած կուտակված մաշվածությունը: Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է գծային եղանակով՝ ելնելով նրանց օգտակար ծառայության ժամկետներից, իսկ դրա անհնարիմության դեպքում օգտակար ծառայության ժամկետը ընդունվում է 10 տարի: Այսպես՝

Համակարգչային ծրագրերի համար ընտրված է	10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվների համար՝	20 տարի:

**3. Դրամական միջոցներ:**

2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության դրամական միջոցները հետևյալն են՝

ա. Կանխիկ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	75,0 հազ. դր.
բ. Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում	219 946,0 հազ. դր.
<b>Ընդամենը</b>	<b>220 021,0 հազար դր.</b>

**4. Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ:**

2007թ դեկտեմբերի 31- դրությամբ ընկերության ապահովագրության գծով ստացման ենթակա գումարները հետևյալն են՝

ա.Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ապահովագրողներից (ապահովադիրներից)	352 346,0 հազ.դր
բ.Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտ ապահովագրողներից (ապահովադիրներից)	863,0 հազ.դր
գ.Ապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(7 992,0) հազ.դր
դ. Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներից	146,0 հազ.դր
ե.Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ռեզիդենտ ապահովագրողներից ստացվելիք վերապահովագրավճարներ	591,0 հազ.դր
զ. Վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով ոչ ռեզիդենտ ապահովագրողներից ստացվելիք վերապահովագրավճարներ	1 332,0 հազ.դր
է.Հատուցումների գծով պահանջներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողների նկատմամբ	163 726,0 հազ.դր
ը.Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ ռեզիդենտների նկատմամբ	298,0 հազ.դր
թ.Ապահովագրական պայմանագրերի գծով ոչ ռեզիդենտներից ստացվելիք այլ գումարներ	71 214,0 հազ.դր
<b>Ընդամենը</b>	<b>582 524,0 հազ.դր</b>

**5. Ընթացիկ ավանդներ :**

Ընկերության ընթացիկ ավանդները 2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են՝

<u>Ավանդներ ռեզիդենտ բանկերում</u>	407 760,0 հազ.դր
Ընդամենը	407 760,0 հազ.դր

**6.Ընթացիկ փոխատվություններ:**

Ընթացիկ փոխատվությունները 2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի հետևյալ կառուցվածքը՝

. Ռեզիդենտ ապահովագրական ընկերություններին տրամադրված փոխատվություններ

15 244,0 հազ.դր

Ընդամենը	15 244,0 հազ.դր
----------	-----------------

**7. Վաճառքի համար մատչելի ընթացիկ արժեթղթեր:**

ա. ՀՀ ԿԲ արժեթղթեր	2 841,0 հազ.դր
ա. ՀՀ պետական արժեթղթեր	3 055,0 հազ.դր
բ. ՀՀ ոչ պետական արժեթղթեր	35 340,0 հազ.դր
Ընդամենը	41 236,0 հազ.դր

## 8. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

ա. Կանխավճարներ ռեզիդենտ մատակարարներից	6 440,0 հազ.դր
բ. Կանխավճարներ ոչ ռեզիդենտներից	253,0 հազ.դր
դ. Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով	128,0 հազ.դր
Ընդամենը	6 821,0 հազ.դր

## 9. Ստացվելիք տոկոսներ:

Ընկերության կողմից հաշվեգրված և ստացման ենթակա տոկոսները 2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են	
ա. Ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով	8 731,0 հազ.դր
ա. Վաճառքի համար մատչելի ընթացիկ արժեթղթերի գծով	348,0 հազ. դր.
Ընդամենը	9 079,0 հազ.դր

## 10. Այլ ընթացիկ ակտիվներ

Ընթացիկ այլ ակտիվներ	421,0 հազ.դր
Ընդամենը	421,0 հազ.դր

4.13) Ծանոթագրություն 13. «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»: Ծանոթագրություն 13-ի տարրերն են՝

## 11. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն. միջոց. գծով կապիտալներդ.	Վարձ. հիմն. միջոց. գծով կապիտալներդ.	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>	-----	-----	-----	-----	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	46 966	2 372	2 874	7 393			59 605
Ավելացում		476		973			1 449
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	46 966	2 849	2 874	8 366			61 055
Ավելացում	3 608	4 180	13 043	154			20 985
Օտարում	15 023						15 023
Վերագնահատում*	35 949						35 949
Արժեզրկում							
Վերագնահատումից							

մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	71 500	7 029	15 917	8 520			102 966
<b>Կուտակված մաշվածություն</b>	-----	-----	-----	-----	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	10 483	2 106	1 341	4 498			18 428
Ավելացում	2 348	236	575	1 250			4 409
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	12 831	2 342	1 916	5 748			22 837
Ավելացում	2 407	2 267	2 531	1 167			8 372
Օտարում	15 023						15 023
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Արժեզրկում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	215	4 609	4 447	6 915			16 186

**Չուտ հաշվեկշռային արժեք** -----

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	71 285	2 420	11 470	1 605			86 780
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	36 483	743	1 533	3 868			42 627

բ. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալ ներդ.	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>	-----	-----	-----	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	589			199 903		200 492
Ավելացում	21					21
Օտարում						
Արժեզրկում						
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	610			199 903		200 513
Ավելացում	2 552					

Օտարում						
Վերագնահատում*						
Արժեզրկում						
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	3 162			199 903		203 065
<b>Կուտակված մաշվածություն</b>	-----	-----	-----	-----	-----	-----
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	37			56 790		56 827
Ավելացում	60			9 995		10 055
Օտարում						
Արժեզրկում						
Վերագնահատում						
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	97			66 785		66 882
Ավելացում	61			9 995		1 0 056
Օտարում						
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						
Արժեզրկում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	158			76 780		76 938
<b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>	-----	-----	-----	-----	-----	-----
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	3 004			123 123		126 127
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	513			133 118		133 631

\* Հիմնական միջոցների կազմում ներառված «Շենքեր» բաժնում արտացոլված միավորները ներկայացված են շուկայական արժեքով: Այդ արժեքը որոշված է մասնագիտական որակավորում ունեցող «ԱԳ Բորսա» ՍՊԸ գնահատող կազմակերպության կողմից 29/11/2007թ տրված գնահատման ակտի հիման վրա: Գնահատման արդյունքների հաշվապահական գրանցումը կատարված է «Հիմնական միջոցներ» ՀՀՀՄ16-ի 32 կետի բ. ենթակետի համաձայն, այսինքն՝ գնահատման պահին կուտակված մաշվածությունը հանված է ակտիվի սկզբնական արժեքից և գուտ գումարը վերաձևակերպված է գնահատման արժեքի հիման վրա: Շենքերի վերագնահատումից աճը՝ 35 949,0 հազար դրամի չափով վերագրվել է սեփական կապիտալի տարրին՝ վերագնահատման պահուստին:

**12 Ոչ ընթացիկ ավանդներ:**

Ընկերության ոչ ընթացիկ ավանդները 2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են՝  
ա. Ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդներ  
Ըրդամենը

90 306,0 հազ. դր.  
90 306,0 հազ. դր.

**13. Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ արժեքներ:**

ա. ՀՀ պետական արժեթղթեր	197 192,0 հազ. դր.
բ. ՀՀ ոչ պետական արժեթղթեր	10 040,0 հազ. դր.
գ. Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր	49 976,0 հազ. դր.
Ընդամենը	257 208,0 հազ. դր.

**14. Մտացվելիք տոկոսներ:**

«Մտացվելիք տոկոսներ» հոդվածը իրենից ներկայացնում է՝

ա. Վաճառքի համար մատչելի ոչ քնթացիկ արժեթղթերի գծով Մտացվելիք տոկոսներ\_1 333,0 հազ. դր.

**15. Ապահովագրության գծով վճարելիք գումարներ:**

Ընկերության ապահովագրության գծով վճարվելիք գումարների կազմը 2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է՝

ա. Ռեզիդենտ ապահովագրողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումներ	16 355,0 հազ. դր.
բ. Ռեզիդենտ միջնորդներին վճարվելիք գումարներ	2 490,0 հազ. դր.
գ. Ռեզիդենտ ապահովագրողներին (ապահովադիրներին) հետ վերադարձվող ապահովագրավճարներ	2 544,0 հազ. դր.
Ընդամենը	21 389,0 հազ. դր.

**15. Ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարներ:**

2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարների գումարն է՝

ա. Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	551 582,0 հազ. դր.
Ընդամենը	551 582,0 հազ. դր.

**16. Չվաստակաժ ապահովագրավճարների պահուստ:**

Ընկերության չվաստակաժ ապահովագրավճարների պահուստի մեծությունը 2007թ դեկտեմբերի 31-ին կազմել է՝

ա. Ռեզիդենտների գծով	282 431,0 հազ. դր.
բ. Ոչ ռեզիդենտների գծով	4 668,0 հազ. դր.
Ընդամենը	287 099,0 հազ. դր.

**17. Պահանջների (վնասների) պահուստ:**

Ընկերության պահանջների պահուստի մեծությունը 2007թ դեկտեմբերի 31-ին կազմել է՝

ա. Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	24 057,0 հազ. դր.
բ. Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	33 837,0 հազ. դր.
Ընդամենը	57 894,0 հազ. դր.

**18. Այլ ապահովագրական պահուստներ:**

Այլ ապահովագրական պահուստներ տողում ներառված է՝

Հավասարակշռման պահուստը	1 437,0 հազ. դր.
Ընդամենը	1 437,0 հազ. դր.

**19. Այլ վճարվելիք գումարներ:**



2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության այլ վճարվելիք գումարները հետևյալն են՝

ա. Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով	29 726,0 հազ. դր.
բ. Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	4,0 հազ. դր.
գ. Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ	71 637,0 հազ. դր.
դ. Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ	<u>3 685,0 հազ. դր.</u>
Ընդամենը	105 052,0 հազ. դր.

**20. Կանոնադրական կապիտալ:**

2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության կանոնադիր կապիտալը կազմում է 596 568,0 հազ. դր.

**21. Գլխավոր պահուստ**

2007թ դեկտեմբերի 31-ին գլխավոր պահուստի մեծությունը կազմել է 6 690,0 հազ. դր.

**21. Վերագնահատման պահուստներ:**

Ընկերության 2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագնահատման պահուստը իրենից ներկայացնում է՝  
ա. Հիմնական միջոցների վերագնահատման պահուստը 35 949,0 հազ. դր.  
Այն առաջացել է շենքերի դասի վերագնահատման արդյունքում առաջացած արժեքի աճը սեփական կապիտալի տարր համդիսացող հիմնական միջոցների վերագնահատման պահուստին վերագրելու հետևանքով:

**22. Զբաղիված շահույթ (վնաս):**

Ընկերությունը 2007թ տարեկան արդյունքներով ունեցել է 180 006,0 հազար դրամի գուտ շահույթ: 2007թ դեկտեմբերի 31-ի դրությամբ չբաղիված շահույթը կազմել է

ա. Ընթացիկ տարվա համար	180 006,0 հազ. դր.
բ. Նախորդ տարվա համար	1 194,0 հազ. դր.
Ընդամենը	<u>181 200,0 հազ. դր.</u>

**23. Եկամուտներ ապահովագրավճարներից:**

ա. Ոչ կյանքի ապահովագրության գծով ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտներ 1 462 785,0 հազ. դր.  
բ. Ոչ կյանքի ապահովագրության գծով ոչ ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտներ 34 591,0 հազ. դր.  
գ. Ստացվելիք վերաապահովագրավճարների գծով եկամուտներ ոչ ռեզիդենտ 999,0 հազ. դր.  
վերաապահովագրողներից  
Ընդամենը 1 498 375,0 հազ. դր.

**24. Եկամուտներ միջնորդավճարներից:**

ա. Ոչ ռեզիդենտ միջնորդներից ստացվելիք միջնորդավճարների գծով եկամուտներ 81 733,0 հազ. դր.

**25. Եկամուտներ վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումներից:**

ա. Ոչ կյանքի ապահովագրության գծով ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով եկամուտներ 208 937,0 հազ. դր.

**26. Եկամուտներ սուբրոգացիայից:**

ա. Ոչ կյանքի ապահովագրության գծով սուբրոգացիայի հետևանքով ռեզիդենտների նկատմամբ առաջացած պահանջներից եկամուտներ 1 335,0 հազ. դր.

**27. Այլ եկամուտներ**

Ոչ կյանքի ապահովագրության գծով այլ եկամուտներ ոչ ռեզիդենտներից (վերադարձվելիք վերապահովագրավճարներ)	11 410,0 հազ.դր.
<b>Ընդամենը եկամուտներ ոչ կյանքի ապահովագրության գծով</b>	<b>1 801 790,0 հազ.դր.</b>
28. Եկամուտներ չվաստակաձ ապահովագրավճարների պահուստի հակադարձումից:	2 704 666.0 հազ. դր
29. Եկամուտներ պահանջների (վնասի) պահուստի հակադարձումից:	340 542,0 հազ. դր.
30. Եկամուտներ մաքենատիկական պահուստի հակադարձումից:	8 324,0 հազ. դր.
31. Եկամուտներ չվաստակաձ ապահովագրավճարների պահուստից վերապահովագրողի բաժնի նվազեցման գծով:	244 128,0 հազ.դր.,
<u>32. Եկամուտներ պահանջների (վնասի) պահուստից վերապահովագրողի բաժնի նվազեցման գծով</u>	<u>24 323,0 հազ. դր.</u>
<b>Ընդամենը</b>	<b>3 321 983,0 հազ.դր.</b>
33. <b>Հատուցումներ ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով:</b>	
ա. Ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումների գծով	306 346,0 հազ. դր.
բ. Ոչ ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումների գծով	5 673,0 հազ. դր
<b>Ընդամենը</b>	<b>312 019,0 հազ.դր.</b>
34. <b>Ծախսեր ապահովագրական միջնորդների գծով:</b>	
ա. Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների գծով ծախսեր	154 815,0 հազ. դր.
32. <b>Ծախսեր վերապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով:</b>	
ա. Ոչ ռեզիդենտ վերապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր	820 404,0 հազ.դր.
33. <b>. Այլ ծախսեր:</b>	
ա. Ռեզիդենտ ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ՝ լուծված պայմագրերի գծով	61 570,0 հազ.դր.
բ. Ոչ ռեզիդենտ ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ՝ լուծված պայմագրերի գծով	1 417,0 հազ.դր.
<u>գ. Ռեզիդենտներին վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր</u>	<u>120,0 հազ. դր.</u>
<b>Ընդամենը</b>	<b>63 107,0 հազ.դր.</b>
34. <b>Ծախսեր չվաստակաձ ապահովագրավճարների պահուստի ձևավորման գծով»:</b>	
ա. Չվաստակաձ ապահովագրավճարների պահուստների ձևավորման ծախսեր	3 012 542,0 հազ. դր.
35. <b>Ծախսեր պահանջների (վնասների) պահուստի ձևավորման գծով:</b>	
ա. Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների ձևավորման ծախսեր	372 744,0 հազ.դր.
բ. Տեղի ունեցած, սակայն ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստի ձևավորման ծախսեր	38 614,0 հազ.դր
<b>Ընդամենը</b>	<b>411 358,0 հազ.դր.</b>
գ. Հավասարակշռման պահուստի ձևավորման ծախսեր	1 437,0 հազ.դր
<b>36. Ներդրումներից ստացվող տոկոսային եկամուտներ:</b>	

ա. Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով	25 170,0 հազ.դր.
բ. Տոկոսային եկամուտներ ռեզիդենտներին տրամադրված փոխառություններից	8,0 հազ.դր.
գ. Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից	329,0 հազ.դր.
դ. Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական արժեթղթերից	17 384,0 հազ.դր.
ե. Տոկոսային եկամուտներ ՀՀ ոչ պետական արժեթղթերից	1 597,0 հազ. դր.
<b>Ընդամենը</b>	<b>44 488,0 հազ.դր.</b>

**36. Այլ տոկոսային եկամուտներ:**

գ. Դիվիդենտներ այլ երկրների ոչ պետական արժեթղթերից	1 027,0 հազ.դր.
--	-----------------

**37. Վաճառքի համար մատչելի արժեթղթերից գուտ շահույթ/վնաս:**

ա. Ֆինանսական ակտիվների վերահաշվառումից եկամուտներ	11 892,0 հազ.դր.
բ. Ֆինանսական ակտիվների վերահաշվառումից ծախսեր	8 095,0 հազ.դր.

**Ընդամենը**

**3 797,0 հազ.դր.**

**38. Այլ եկամուտներ:**

ա. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ	51 861,0 հազ.դր.
բ. Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին կատարված մասհանումների հակադարձումից եկամուտներ	19 208,0 հազ.դր.
գ. Անհուսալի կրեդիտորական պարտքերի դուրս գրումից եկամուտներ	1 910,0 հազ.դր.
դ. <u>Այլ եկամուտներ</u>	<u>2 814,0 հազ.դր.</u>
<b>Ընդամենը</b>	<b>75 793,0 հազ.դր.</b>

**39 Ընդհանուր վարչական ծախսեր:**

ա. Ծախսեր անձնակազմի գծով	25151,0 հազ.դր.
բ. Կապի և հաղորդակցության գծով ծախսեր	2 671,0 հազ.դր.
գ. Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	8 371,0 հազ.դր.
դ. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	10 056,0 հազ.դր.
ե. Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	8 158,0 հազ.դր.
զ. Գովազդի ծախսեր	59 472,0 հազ.դր.
է. Կողմնակի կազմակերպությունների կողմից ապահովադիրներին մատուցված ծառայություններից ծախսեր	25 219,0 հազ.դր.
զ. Բանկային, աուդիտորական և խորհրդատվական ծառայություններից ծախսեր	3 758,0 հազ.դր.
ը. Գրասենյակային և կոմունալ ծախսեր	5 705,0 հազ.դր.
թ. Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման ծախսեր	4 846,0 հազ.դր.
ժ. <u>Այլ ծախսեր</u>	<u>460,0 հազ.դր.</u>
<b>Ընդամենը</b>	<b>153 867,0 հազ.դր.</b>

**40. Այլ ծախսեր:**

ա. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր	32 024,0 հազ.դր.
բ. Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրումից ծախսեր	13 450,0 հազ.դր.
գ. Ակտիվների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին կատարված մասհանումների գծով ծախսեր	17 352,0 հազ.դր.
դ. Չիչված պարտավորություններից ծախսեր	19 800,0 հազ.դր.
ե. Հարկեր, տուրքեր	4 825,0 հազ.դր.
զ. Ֆինանսական ակտիվների գծով սպասարկման ծախսեր	4 051,0 հազ.դր.
է. <u>Այլ ծախսեր</u>	<u>1 686,0 հազ.դր.</u>
<b>Ընդամենը</b>	<b>93 188,0 հազ.դր.</b>

**41. Շահութահարկի գծով ծախս:**

ա. 2007թ տարեկան արդյունքներով ընկերության հաշվապահական շահույթը կազմել է	226 141,0 հազ.դր.
բ. ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքի դրույթների համաձայն հարկվաղ շահույթին՝ ավելացվող եկամուտը կազմել է՝	51 861,0 հազ.դր.
նվազեցումը կազմել է՝	(56 395,0) հազ.դր.
Ընդամենը շահութահարկով հարկման նպատակով հաշվապահական շահույթին ավելացվող գումարը կազմել է՝	4 534,0 հազ.դր.
<u>Հարկման նպատակով շահույթը կազմել է</u>	<u>230 675,0 հազ.դր.</u>

\* 2007թ հունվարի 27-ի ապահովագրական պայուսակի ընդունման-հանձնման ակտով ընկերությունը ընդունել է «Ալիանց-Ֆլեշ» ԱՓԲԸ ապահովագրության պայուսակը գույքի, ավտոմեքենաների, պատասխանատվության, ավիացիոն ռիսկերի, աջակցության, բեռնափոխադրումների գծով:  
 Նշվածի արդյունքում փոփոխվել են ընկերության ակտիվները և պարտավորությունները ավիացիոն ռիսկերի գծով`  
 Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ապահովագրողներից (ապահովադիրներից) 221 864,0 հազ. դր  
 Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ 175 202,0 հազ. դր  
 Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ 9 319,0 հազ. դր  
 Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ 1 864,0 հազ. դր

**42 Արտահաշվեկշռային հաշիվներ:**

Ցուցանիշի անվանումը	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	3
Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ		
Որպես գրավ պահվող ակտիվներ		
Պայմանական պարտավորություններ		
Պայմանական ակտիվներ		
Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր		
Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր		
Չհատուցված հարկային վնաս		
Գրավադրված ակտիվներ		
Խիստ հաշվառման բլանկներ		
Պարբերական և մասնագիտական գրականություն		
Շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ		
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ	34 386 462,0	415 777 897,0
Կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ		

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն`

Լ. Ալբունյան

Գլխավոր հաշվապահ

Ա. Բալբաբյան